

## ԳՐԱՔԱՐԻ ՀՆՉՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ Է. ԱՂԱՅԱՆԻ

### ԹԵՐԵՁԱ ՇԱՀԿԵՐԴՅԱՆ

Անցյալ դարի երկրորդ կեսին անվանի լեզվաբան Է. Աղայանը ձեռնամուխ եղավ գրաբարի քերականության բազմակողմանի ուսումնասիրության դժվարին, բայց շատ կարևոր ու պատասխանատու գործին:

Է. Աղայանը նպատակ էր դրել իր աշխատությունը ներկայացնել երկու հատորով. առաջինը պետք է լիներ դասական գրաբարի քննական քերականությունը, երկրորդը՝ պատմությունը: Ցավով ու ափսոսանքով պետք է նշել, որ բացի «Հնչյունաբանությունից»՝ այս շարքի մյուս գրքերը կյանքի չկոչվեցին, և Է. Աղայանի «Գրաբարի քերականությունը» ընդգրկում է միայն գրաբարի հնչյունային համակարգի նկարագրությունը՝ համաժամանակյա կտրվածքով:

Իբրև ելակետային վիճակ՝ Աղայանը վերցնում է մեսրոպյան հայերենն ու փորձում ներկայացնել դասական գրաբարի կառուցվածքը լեզվաբանական նորագույն մեթոդներով<sup>1</sup>:

Մինչև գրաբարի հնչյունային համակարգի քննությունը հեղինակն առաջին գլխում ընդհանուր գծերով ներկայացրել է այն հիմնական դրույթները, որոնց իմացությունն ու կիրառությունը պարտադիր են յուրաքանչյուր լեզվի հնչույթային համակարգը ուսումնասիրողի համար:

Այսպես՝ առաջին հերթին Է. Աղայանը շեշտը դնում է հնչույթի իմաստատարբերակիչ հատկանիշի վրա. «Հնչյունները լեզվի նյութական միավորներն են. իբրև այդպիսիք նրանք ծառայում են խոսքի մեջ բոլոր լեզվական իմաստների ձևավորմանն ու հաղորդմանը: Հանդես գալով որպես իմաստների ձևավորման միջոց՝ հնչյունները, հենց դրանով իսկ, հանդես են գալիս նաև որպես իմաստների տարբերակման նյութական միավորներ» (էջ 41):

Երկրորդ՝ համեմատելով հայերենի հնչյունական համակարգը ռուսերենի հետ՝ նա իրավացիորեն նկատում է, որ հայոց լեզվի մեջ կոշտ և փափուկ հնչյուններ տարբերակված չեն, բացի այդ՝ ռուսերենում կան այնպիսի հնչյունակապակցություններ, որոնք անսովոր են հայերենի համար: Կան այլ կարգի արտասանական տարբերություններ ևս, որոնք հատուկ են բոլոր լեզուներին. «...հնչյունների զանազան կապակցությունները, տարբեր դիրքերում նրանց հաճախակի գործածությունը և այլն, կրում են ոչ թե պատահական բնույթ, ներկայացնում են ոչ թե ինչ-որ խառնաշփոթ վիճակ, այլ կազմում են որոշակի համակարգ: Նշանակում է, յուրաքանչյուր լեզվի նյութական միավորները՝ հնչյունները, թե՛ իրենց արտասանական առանձնահատկություններով և թե՛ լեզվի մեջ ձևավորման ի-

<sup>1</sup> Տե՛ս Է. Աղայան, Գրաբարի քերականություն, Եր., 1964, էջ 15: Այսուհետև այս գրքին հղումները կտրվեն շարադրանքում՝ նշելով միայն էջը:

րենց դերով ներկայացնում են մի որոշակի համակարգ՝ տվյալ լեզվի հնչյունական համակարգը» (էջ 43):

Անվանի գիտնականը գտնում է, որ յուրաքանչյուր կենդանի լեզվի հնչյունական համակարգը կարելի է ուսումնասիրել մի քանի մոտեցումներով: Առաջինը հնչյունների ֆիզիոլոգիական և ֆիզիկական հատկանիշների հետազոտությունն է, որը նա առաջարկում է կոչել հնչյունախոսություն: Ֆիզիոլոգիականը կոչվում է նաև արտասանական (արտիկուլյատոր) հնչյունաբանություն, որը արտասանական ապարատի գործունեության վերարտադրությունն է, իսկ ֆիզիկականը ձայնային (ակուստիկ) հնչյունաբանությունն է, որը վեր է հանում հնչյունների ֆիզիկական հատկանիշները:

Հնչյունների ուսումնասիրման երկրորդ մոտեցումը պատմական (դիախրոնիկ) կամ տարաժամանակյա քննությունն է, որի դեպքում բացահայտվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են դարերի ընթացքում որոշակի ընդգրկումներով:

Հնչյունների ուսումնասիրման հաջորդ ելակետը սոցիալական մոտեցումն է. «Այս դեպքում լեզվաբանական միավորը ոչ թե հնչյունն է իր զանազան արտասանական ու ձայնային առանձնահատկություններով, այլ հնչույթը» (էջ 44): Այնուհետև նույն էջի ծանոթության մեջ հեղինակը գրում է. «Ժամանակակից լեզվաբանության մեջ շատ հաճախ հնչյունաբանությունը (ֆոնետիկա) և հնչույթաբանությունը (ֆոնոլոգիա) բաժանում են իրարից, որպես առանձին բաժիններ, ըստ որում այդ բանը հաճախ արվում է տերմինաբանական շփոթից խուսափելու համար. հայերենը հնարավորություն է տալիս այդ երկուսի միասնությունը պահպանելու. մենք հնչյունաբանություն անվան տակ միավորում ենք հնչյունախոսությունը, որ համապատասխանում է ֆոնետիկային, և հնչույթաբանությունը» (նույն տեղում):

Գաղտնիք չէ, որ մեռած կամ բանավոր հաղորդակցական գործառույթը կորցրած լեզուների հնչյունախոսական ուսումնասիրությունը եթե ոչ անհնարին, ապա շատ դժվար է, ահա թե ինչու է. Աղայանը իրավացիորեն գրում է, որ գրաբարի հնչյունական համակարգի արտասանական և ձայնային վերլուծությունը այդ առումով բացառություն չէ, հետևաբար արդյունքը կարող է լինել «մոտավոր ճշտություն», ուստի նման պարագայում հեղինակը անհրաժեշտաբար դիմել է պատմական հնչյունաբանության տվյալներին, այն էլ ոչ թե պատմական (տարաժամանակյա) ուսումնասիրության առումով, այլ համաժամանակյա վիճակի որևէ իրողության պարզաբանման նպատակով. «Մնում է, այսպիսով, **հնչույթաբանությունը** (ընդգծումը մերն է- Թ.Շ.), որ և սույն գրքի հիմնական առարկան է կազմում», - գրում է է. Աղայանը և ավելացնում, որ այդ վերլուծությունը հնարավոր է իրականացնել բացառապես գրավոր աղբյուրների հիման վրա, և այդպես էլ վարվել է, քանի որ տվյալ առումով բարեբախտաբար 5-րդ դարի գրաբարի գրությունն ու արտասանությունը համապատասխանում են միմյանց, հետևաբար հիմնական ելակետ է ընդունվել լեզվական միավորների գրությունը դասական կամ մեսրոպյան շրջանում (5-րդ դարի 1-ին կեսում). դրանից հետո՝ արդեն 5-րդ դարի 2-րդ կեսից սկսած՝ տարբերու-

թյուններ են առաջանում գրության և արտասանության միջև, իսկ հետդասական գրաբարի պատմական ուսումնասիրությունը է. Աղայանը պետք է ներկայացնեք երկրորդ հատորում, որն էլ չհասցրեց կյանքի կոչել:

Իբրև ուսումնասիրության լեզվանյութ ընտրվել է բնիկ հայկական կամ հնդեվրոպական բառաշերտը, փոխառյալ բառերին հեղինակը դիմել է միայն լրացուցիչ վերլուծությունների համար, քանի որ փոխատու լեզուն շատ հաճախ ունենում է կամ ունեցել է այնպիսի հնչյունակապակցություններ, որոնք փոխառու լեզվի (տվյալ դեպքում դասական գրաբարի համար) անսովոր են, բայց ժամանակի ընթացքում դառնում են սովորական:

Է. Աղայանը կարևոր է համարում ներկայացնել նաև հնչույթի հոգեբանական, ծագումնաբանական, մաթեմատիկական կամ հանրահաշվային, պայմանական կամ մտացածին վերացարկման, բաշխումային, խորհրդանշական, իմացաբանական և ֆունկցիոնալ առավել կարևոր տեսությունները:

Քննելով վերը հիշատակված բոլոր տեսությունները՝ հանգում է հետևյալին. «...այս բոլոր տեսություններն էլ, այսպես թե այնպես, անտեսում, բացասում են հնչույթի նյութականությունը և դրանով իսկ խզում հնչյունի և հնչույթի դիալեկտիկական հակադրամիասնությունը» (էջ 54), ուստի գտնում է, որ անհրաժեշտ է այնպիսի սահմանում, որը իմացաբանորեն բացահայտի հնչույթի՝ որպես լեզվաբանական միավորի էությունը, և ելակետ է ընդունում նրա նյութականությունը, որն էլ արտահայտվում է տարբեր էական և ոչ էական հատկանիշներով:

Հնչույթի նյութականությունն ասելով՝ նկատի ունի ձայնը, որ կոչում է լեզվական ձայն՝ մյուս ձայներից տարբերելու համար: Լեզվական ձայնն ունի սահմանափակ տևողություն, հատուկ է բոլոր լեզուներին և լեզվի իմաստային միավորների նյութական ձևավորման միջոց է: Նրա ներքին տարբերակման առաջին աստիճանը ձայնավորների և բաղաձայնների բաժանելն է. ձայնավորը՝ որպես երաժշտական ձայն, բաղաձայնը՝ աղմուկ կամ աղմուկի և երաժշտական ձայնի միասնություն, սակայն ձայնի և աղմուկի մեջ էլ հանդես են գալիս նոր հատկանիշներ, որոնցով միմյանցից տարբերակվում են տարբեր ձայնավորներն ու տարբեր բաղաձայնները:

Այնուամենայնիվ, հնչյունները ցանկացած լեզվում սահմանափակ են, քանի որ մարդու արտասանական ապարատի գործունեությունը անսահմանափակ հնարավորություններ չունի: Հետևաբար ձայնավորների ու բաղաձայնների զանազան տարբերակիչ հատկանիշների առաջացման հիմքերը նույնպես կարող են սահմանափակ լինել: Ձայնավորների դեպքում «...ձայնի տարբերակիչ հատկանիշներ կարող են առաջացնել... 1) տատանումների հաճախականությունը, 2) տատանումների կորագծի մեծությունը, 3) արձագանքի տարբերությունները, որոնք պայմանավորված են արձագանքարանի ծավալով ու ձևով, 4) արտասանության տևողությունը: Բաղաձայնների տարբերությունները պայմանավորված են՝ 1) պատնեշների տեղով, 2) պատնեշների բնույթով, 3) ներդաշնակ ձայնային տարրերի պարունակությամբ կամ բացակայությամբ, 4) լրացուցիչ արձագանքարանի (ռնգային խռոչի) օգտագործմամբ: Դրանց համապատասխան էլ բաղաձայնները ստանում են իրենց տարբերակիչ հատկանիշները:

Հնչյունախոսությամբ, այսինքն արտասանական ու ձայնային հնչյունաբանությանն է վերաբերում այդ բոլոր արտասանական առանձնահատկությունների ու տարբերակիչ հատկանիշների նկարագրությունը» (էջ 60-61):

Է. Աղայանը գտնում է, որ ամեն մի իրական հնչյուն հնչույթ է, քանի որ այն նրա իրական, եզակի դրսևորումն է. «...հնչյունի և հնչույթի միասնությունն առանձինի, եզակիի և ընդհանուրի հակադրամիասնություն է ... հնչույթը և հնչյունը նույնական են, որչափով նույնական են ամեն մի ընդհանուր և նրա եզակի դրսևորում», և տալիս է հնչույթի հետևյալ սահմանումը. «Հնչույթը լեզվի այն նվազագույն նյութական միավորն է, որ իր բոլոր դրսևորումների մեջ ունի միևնույն տարբերակիչ հատկանիշները, կամ այլ կերպ՝ հնչույթը միևնույն տարբերակիչ հատկանիշներն ունեցող հնչյունների ընդհանուրն է» (էջ 64):

Իրավացիորեն գտնելով, որ հնչույթն իր դրսևորումների մեջ եզակի է և ունի էական հատկանիշներ, նկատում է, որ այն օժտված է նաև մասնակի հատկանիշներով, որոնք կարող են երբեմն անհատական, երբեմն պատահական, երբեմն էլ մշտական բնույթ ունենալ:

Անհատականը կապվում է խոսողի արտասանական առանձնահատկությունների հետ, պատահականը՝ հաղորդակցման գործընթացում որևէ գործոնի առկայության հետ, իսկ մշտականը հատուկ է հնչույթի բոլոր եզակի դրսևորումներին առհասարակ՝ որոշակի հանգամանքներում:

Է. Աղայանը մշտական հատկանիշների հավասարաբեք տարբերակները անվանում է ենթահնչույթ, օրինակ՝ ռուսերենի *к* (=հայ. կ) և *к* (=հայ. ք) հնչյունները նույն հնչույթի ենթահնչույթներ է համարում (տե՛ս էջ 70):

Այսպիսով՝ հնչույթների բոլոր հատկանիշները բաժանվում են երեք կարգերի՝ բացի անհատական բնույթ կրող առանձնահատկություններից:

Առաջին կարգի հատկանիշները հատուկ են բոլոր եզակի դրսևորումներին և կապված չեն խոսքային պայմանների հետ: Դրանք կոչվում են **հնչույթային տարբերակիչ հատկանիշներ**, երկրորդ կարգի հատկանիշները ևս հատուկ են հնչույթների բոլոր եզակի դրսևորումներին, սակայն որոշակի պայմաններում դրանք արդեն ենթահնչույթների տարբերակման հիմքն են կազմում և կոչվում են **ենթահնչույթային տարբերակիչ հատկանիշներ**: Երրորդ կարգի հատկանիշները որևէ գործոնի ազդեցությամբ ոչ կանոնավոր բնույթ կրող պատահական հատկանիշներ են, որոնք կոչվում են **հնչույթային տարատեսակների տարբերակիչ հատկանիշներ** (տե՛ս էջ 71):

Հաշվի առնելով այս ամենը՝ հեղինակը նշում է այն երկու մեթոդները, որոնցով կարելի է ուսումնասիրել լեզվի հնչյունական համակարգը: Առաջինը փորձառական ուսումնասիրության մեթոդն է, երկրորդը՝ լեզվական միավորների հակադրման: Հանգամանորեն ներկայացնելով այս երկու մեթոդների էությունն ու կարևորությունը՝ վերջում իրավացիորեն նկատում է, որ դրանք միասին կարելի է կիրառել միայն կենդանի լեզուների հնչույթային համակարգերի ուսումնասիրության ժամանակ, իսկ մեռած լեզուների դեպքում կիրառելի է միայն երկրորդ՝ լեզվական միավորների հակադրման մեթոդը, ուստի գրաբարի հնչույթային համակարգի քննությունը

կատարել է հենց այս երկրորդ մեթոդի գործադրմամբ:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է գրաբարի հնչույթային համակարգի քննությանը: Խոսելով գրաբարի ձայնավորների մասին՝ հեղինակն ուսումնասիրությունը սկսում է այն ձայնավորներից, որոնց գոյությունը վիճահարույց չէ: Բանն այն է, որ գրաբարագետների մի մասն է միայն **ու** և է հնչյունները ձայնավոր համարել, մի մասն էլ դրանք երկբարբառ է համարել: Է. Աղայանն այդ հարցին մոտենում է յուրովի: **Ա, Ե, Ռ** ձայնավորների հնչույթային արժեքը բառասկզբի և բառամիջի դիրքերում հիմնավորում է նվազագույն զույգերի հակադրությամբ, իսկ քանի որ հին հայերենում (վաղ շրջանում) բառը ձայնավորով չէր կարող վերջանալ, ուստի բառավերջի իմաստազատիչ դերին չի անդրադառնում: Աղայանը նկատում է նաև մի այլ կարևոր հանգամանք. այս ձայնավորները երկբարբառների կազմում միշտ վանկարար դեր են կատարում: **Ե** ձայնավորը մի փոքր այլ «բնավորություն» է դրսևորում. միանալով հաջորդ **յ**-ին՝ դառնում է **է**:

**Ը** ձայնավորը, որը երբեմն գրության մեջ չի արտահայտվում, կարևոր դեր ունի առհասարակ բաղաձայնների կուտակման դեպքում, այն գերազանցապես հանդես է գալիս բառասկզբում, բարդ ու ածանցավոր բառերի կազմում կարող է հանդես գալ այն դեպքում, եթե այն արմատի սկզբնատառ է, մնացած դեպքերում, ինչպես նաև բառի վերջում **ը**-ն հանդես գալ չի կարող: Այս հանգամանքը կասկածի տակ է առնում **ը** ձայնավորի հնչույթ լինելու հանգամանքը, սակայն Է. Աղայանը հիմնավորում է, որ այն ենթահնչույթ չի կարող լինել, այն հնչույթ է, թե՛ գրաբարում, թե՛ արդի հայերենում: **Ը** ձայնավորի արտասանությունը տարբեր է բառի տարբեր դիրքերում, այն լիահունչ է միայն բառասկզբում՝ ձայնորդ+պայթական կամ պայթաշփական կապակցություններից առաջ, մյուս դիրքերի թույլ արտասանությունը կապված է շեշտի հետ: Ձայնավորները, շեշտը կորցնելով, կան սղվում են, կան ամփոփվում: Շեշտազուրկ ձայնավորները թույլ կամ սուղ են արտասանվում: Լեզվի պատմության բոլոր շրջաններում **ը**-ն թույլ է արտասանվել, այդ պատճառով էլ գրությամբ չի արտահայտվել:

Ինչ մնում է **ը**-ի հնչույթային արժեքին, Է. Աղայանը կրկին առաջնորդվում է լեզվական միավորների նվազագույն հակադրման օրենքով: Բառասկզբում նրա դրսևորած իմաստազատիչ դերը կասկած չի հարուցում (*ըստ-աստ-ոստ*): Բառամիջում նրա հնչույթային արժեքը հիմնավորում է հետևյալ օրինակներով.

*«... վարս «մազ» - վարըս (վարք գյ., հայց հլ.)*

*անունդ «անսերմ» - անունըդ «այդ անունը»*

*սանդ - սանըդ «այդ սանը»*

*միակնութիւն «միաչքանի լինելը» - միակընութիւն «միակին լինելը»*

(էջ 87):

Ինչ մնում է բառավերջին, ապա քանի որ **ը**-ն շեշտակիր չէ, ուստի այդտեղ հանդես գալ չի կարող:

**Ի** ձայնավորի մասին խոսելիս հեղինակը ներկայացնում է այն բոլոր հակադրությունները, որ նա կարող է ունենալ մյուս ձայնավորների նկատմամբ:

**/ի/ - /Ա/ և /ի/ - /Ո/** հակադրությունները գոյություն ունեն բառի բոլոր

դիրքերում, /Ի/ - /Ե/ և /Ի/ - /Ը/ հակադրությունները սահմանափակ են, իսկ /Ի/ - /Ու/, /Ի/ - /Է/ հակադրություններ չկան նշված օրինակներում (տե՛ս էջ 88): Եթե ու-ն և է-ն երկբարբառ են դիտվում, այդ դեպքում քննությունը փոխվում է այլ ոլորտ՝ Ի-ի հակադրությունը երկբարբառների հետ, իսկ Ե-թե պարզ ձայնավոր են դիտվում, ապա հակադրության համար բերվում են մի շարք զույգեր (տե՛ս էջ 89), որոնց ուսումնասիրությամբ պարզվում է, որ /Ի/ - /Ու/ հակադրությունը սահմանափակում չունի. /Ի/ - /Է/ հակադրությունը առկա է միայն միավանկ բառերի մեջ, իսկ բազմավանկ բառերում՝ վերջնավանկում: Այնուհետև նշում են այն բոլոր հնարավոր փոփոխությունները, որ կրում է Ի-ն բառի տարբեր դիրքերում: Վերջնադրությունը հանգում է այն եզրակացության, որ Ի-ն պահպանել է նախալեզվին հատուկ իր եռակի բնույթը: Այն կարող է հակադրվել բոլոր ձայնավորներին ու բաղաձայններին, բայց չի կարող հակադրվել յ ձայնորդին, ուստի Ի-ն և յ-ն ենթահնչույթներ են մեկ այլ հնչույթի, որը պայմանականորեն նշանակում է Ի (տե՛ս էջ 92): «Այդ ենթահնչույթներից Ի/-ն հանդես է գալիս որպես ձայնավոր, հետևաբար՝ միշտ բաղաձայնից առաջ, բառավերջում կամ այնպիսի ձայնավորից առաջ, որով սկսվում է մի ուրիշ վանկ կամ որը երկբարբառի ոչ վանկարար բաղադրիչ է, այլ կերպ ասած՝ նա չի կարող հանդես գալ մի որևէ այլ վանկարար ձայնավորի հետ միևնույն վանկում: Ընդհակառակն, (յ)-ն հանդես է գալիս միայն ձայնավորի հետ և չի կարող բաղաձայնների միջև լինել՝ առանց ձայնավորի» (էջ 92):

Միանգամից ասենք, որ է ձայնավորի քննությունը է. Աղայանը տեղափոխում է երկբարբառների բաժին, ուստի այն պարզ ձայնավոր չի դիտում, իսկ ու-ի մասին անում է հիմնավոր վերլուծություններ և ապացուցում, որ ու-ն դասական շրջանում արդեն ոչ թե երկբարբառ էր, այլ պարզ հնչյուն: Բանն այն է, որ Մեսրոպ Մաշտոցն ու-ի համար հորինել է երկու տառ **ո+ւ** և, որ ավելի կարևոր է, իր այբուբենի մեջ չի մտցրել: Քանի որ մեսրոպյան այբուբենը կառուցված է մեկ հնչյունին մեկ տառ սկզբունքով, ապա ենթադրվում է, որ ու-ն եղել է երկբարբառ և արտասանվել է **ոու** (ou): Սակայն գիտնականների մի մասն էլ ու-ն համարում է պարզ ձայնավոր և գտնում է, որ Մաշտոցն այն հորինել է հունարենի հետևողությամբ:

Է. Աղայանը համաժամանակյա ուսումնասիրությամբ պարզում է, որ շեշտակորույս ու-ն փակ վանկում դառնում է **ը** կամ սղվում: Գրաբարի շեշտափոխական հնչյունափոխությունը վկայակոչելով՝ գրում է, որ գրաբարի եռաբարբառները շեշտը կորցնելիս դառնում են երկբարբառներ (**հրեայք-հրէից**), երկբարբառները՝ պարզ ձայնավորներ (**մատեան-մատենի**), ձայնավորները կա՛մ դառնում են **ը**, կա՛մ սղվում են (**ամուսին-ամուսնոյ**), իսկ ու ձայնավորը շեշտը կորցնելիս սղվում է (**թռչուն-թռչնոյ, գլուխ-գլխոյ**), ավելին՝ **ոյ** երկբարբառը շեշտը կորցնելիս դառնում է ու (**լոյս-լուսոյ, հոյս-հուսոյ**): Երկու դեպքում էլ ու-ն պարզ ձայնավորի կարգավիճակում է հանդես գալիս:

**Ու**-ի պարզ ձայնավոր լինելու հանգամանքը բացատրվում է նաև տառադարձությամբ: Հայերենի հնդեվրոպական ծագում ունեցող բառերի, ինչպես նաև պարսկական փոխառությունների **ս**-ն համապատասխանել է մեր ու-ին: Իհարկե կան բառեր, որոնք նախաշեշտ դիրքում համապա-

տասխանել են **օս**-ին, սակայն դրանք հայերենում դառնում են **ոյ**, որն էլ շեշտի կորստի հետևանքով դառնում է **ու**:

**Ու**-ով բառերի նվազագույն հակադրությունները ցույց են տալիս, որ այն հակադրվում է բոլոր ձայնավորներին՝ բացի **ը**-ից, բառավերջում չի հակադրվում նաև **ը** և **ե** ձայնավորներին, քանի դրանք բառի վերջում հանդես չեն գալիս, իսկ **(Ա), (Ո), (Ու), (Ի)** ձայնավորներին հակադրվում է:

Ձայնավորների ուսումնասիրության վերջնական արդյունքում է. Ա-դայանը գրում է, որ գրաբարն ունի 6 ձայնավոր՝ **(Ա), (Ե), (Ո), (Ը), (Ի), (Ու)**: Սրանցից առաջին երեքը միշտ վանկարար են և տառադարձամբ համապատասխանել են **(ա), (ե), (ս)**-ին:

Իբրև գրաբարի ձայնավորական համակարգին բնորոշ հատկանիշ՝ նշվում է նաև, որ դասական հայերենը չունի կարճ և երկար ձայնավորներ, սակայն շեշտակիր և ոչ շեշտակիր ձայնավորները միանման չեն արտաբերվում: Փորձառական հնչյունաբանությունը վկայում է, որ շեշտակիր ձայնավորները արտաբերվում են անհամեմատ ուժգին և երկար տևողությամբ, ուստի շեշտակիր և ոչ շեշտակիր ձայնավորների համար է. Ադայանը ընտրում է **լի** (շեշտակիր) և **սուղ** (անշեշտ) եզրույթներ:

Ձայնավորների գործածության շրջանակների մասին խոսելիս վերջում նա կանգ է առնում դրանց՝ բառավերջում հանդես գալու հանգամանքների վրա:

Հին հայերենի նախնական շրջանում բառը չէր կարող վերջանալ **ո** կամ **ը** ձայնավորով, իսկ մյուս ձայնավորները հանդես էին գալիս միայն միավանկ բառերում՝ **սա, դա, թե, մի** և այլն, բազմավանկ բառերը վերջանում էին բաղաձայնով, այդ թվում՝ ոչ վանկարար ձայնորդով, **ի** և **ու** ձայնավորներով և սահմանափակ դեպքերում՝ **ա** և **ո** ձայնավորներով:

Է. Ադայանը բավականին ծավալուն ու հանգամանալից քննության է ենթարկել գրաբարի երկբարբառները, որոնց լուսաբանման համար խորքային վերլուծության է ենթարկել ձայնավորների վանկակազմիչ արժեքն ու դերը տարբեր ոլորտներում ու ճշտել այն սահմանները, թե ե՞րբ են առաջանում երկբարբառները, ո՞ր դիրքում են համարվում այդպիսիք:

Ադայանը բերում է երկու շարքեր, որոնցից առաջինում հակադրվում են մեկական ձայնավորի ու ձայնորդի կապակցություններ, երկրորդում՝ ձայնավորի ու ձայնորդի այնպիսի կապակցություններ, որոնց մի բաղադրիչը տարբեր է (*օր*.՝ **խայթ-խոյթ**), ու նկատում, որ այս դեպքում առկա է **այ-ոյ** կապակցությունների իմաստազատիչ դեր, և նման հնչյունակապակցությունների բաղադրիչների կապը այնքան սերտ է, որ ձեռք են բերում մեկ միասնական հնչույթի արժեք: Այնուհետև հիմնավորում է, որ, ասենք, **հայր, հաւր** բառերի մեջ ունենք ոչ թե **յ-ւ** հակադրություն, այլ՝ **այ-աւ** հակադրություն, ուստի վանկ կազմում են ոչ թե միայն ձայնավորները, այլ՝ **ոյ-այ (ոյր-այր), աւ-իւ (աւր-իւր), ա-այ (տար-տայր), ո-ոյ (զոն-զոյր), ի-իւ (սին-սիւն)** հակադրությունները, հետևաբար այս հնչյունակապակցությունները լիարժեք հնչույթներ են և ունեն վանկակազմիչ արժեք: Այսպիսով՝ վանկ կազմող հնչույթների շարքում միավորվում են թե՛ ձայնավոր հնչյուններ (**ա, ո, ե** և այլն), թե՛ հնչյունակապակցություններ (**ոյ, այ, իւ, եաւ, եայ, ուաւ** և այլն): Այնուհետև գրում է, որ վանկարար հնչույթից

պետք է տարբերել վանկի հիմքը կազմող միավորները. դրանք էլ անվանում է վանկաբներ. «Ըստ այսմ, *բան, հայր, մաւր, մատեան, գոյն, սիւն, հուն, կոր* և այլն բառերի մեջ **ա, այ, աւ, եա, ոյ, իւ, ու, ո** հավասարապես վանկաբներ են, մինչդեռ վանկարար ձայնավորներն են **ա, ո, ի, ու**» (էջ 104):

Վերը ներկայացված վանկաբներն էլ բաժանում է պարզ և բաղադրյալ տեսակների: Միայն ձայնավորներից կազմվածները պարզ վանկաբներ են կոչվում, ձայնավորի ու ձայնորդի կապակցություններից առաջացածներն էլ՝ բաղադրյալ վանկաբներ:

Այս տարբերակումից հետո ներկայացնում է այն բոլոր հակադրությունները, որոնք ունեն ձայնավորները դասական գրաբարում: Այսպես՝ ըստ գիտնականի՝ ա ձայնավորը կարող է ունենալ **ա, այ, աւ, ուա, ուաւ, ուայ, եա, եաւ, եայ** վանկաբները, **ե** ձայնավորը՝ **ե, եւ, ուե** վանկաբները, **ո** ձայնավորը՝ **ո, ոյ, ուո, ուոյ, ի** ձայնավորը՝ **ի, իւ, ուի** վանկաբներ, **ու** ձայնավորը՝ միայն **ու** վանկաբունը, իսկ **ը**-ն միայն **ը** վանկաբունը (տե՛ս էջ 105-107):

Այնուհետև է. Աղայանը պարզաբանում է, թե դրանք ինչ հարաբերության մեջ են գտնվում միմյանց հետ և որ դեպքում են երկբարբառ կոչվում, որ դեպքում՝ ոչ: Գիտնականը նկատում է, որ ձայնավորից առաջ այդ կապակցությունները (ասենք **եւ-ը**) երկբարբառ չեն, այլ ձայնավորի և բաղաձայնի կապակցություն (*երեւիմ, հարեւան* և այլն): Բառասկզբում *եւս, եւթն, եւղ*, առաջինում երկբարբառ չէ, որովհետև **եւ**-ին հաջորդում է **ը** գաղտնահնչյունը, իսկ **եւ-ը** բառամիջում ունենում է նաև **իւ** տարբերակը, որը հատուկ է մեսրոպյան շրջանին, թեև գիտնականների կարծիքով, **եւ**-ն ավելի հին է և ավելի ընտիր գրաբարի համար, սակայն գրաբարի շրջանում **իւ-ը** ամենակենսունակ երկբարբառներից մեկն է (տե՛ս էջ 109):

Յնչյունակապակցություններից առաջացած կամ բաղադրյալ վանկաբները բաժանում է երկու խմբի. առաջինի մեջ մտնում են այն կապակցությունները, որոնք կազմված են մեկ ձայնավորից ու ձայնորդից կամ հակառակը՝ մեկ ձայնորդից ու ձայնավորից, դրանք կոչվում են երկբարբառներ, իսկ երկորդի մեջ մտնում են երկու ձայնորդից ու մեկ ձայնավորից կազմվածները, սրանք էլ կոչվում են եռբարբառներ:

Ձայնորդից ու ձայնավորից առաջացած երկբարբառները կոչում է բարձրացող կամ ուժգնացող և բերում է **ուե, ուա, եա** օրինակները, իսկ ձայնավորից ու ձայնորդից առաջացածները (**աւ, այ, ոյ** և այլն)՝ թուլացող կամ իջնող երկբարբառներ: Եռբարբառներն, ըստ է. Աղայանի, դասական գրաբարում կարող են լինել միայն բարձրացող-իջնող, այսինքն՝ վանկարար ձայնավորը ընկել է ձայնորդների միջև (տե՛ս էջ 111):

Ամփոփելով իր ուսումնասիրությունը՝ իբրև դասական գրաբարի բարձրացող երկբարբառներ նշում է **եա, ուա, ուե, ուո, ուի**, իբրև իջնող երկբարբառներ՝ **այ, աւ, եւ, ոյ, իւ**, և իբրև եռբարբառներ՝ **եայ, ուայ, եաւ, ուաւ, ուոյ**:

Այնուհետև քննության է առնվում այն հարցը, թե վերը նշված երկբարբառներն ու եռբարբառները ձայնավորից առաջ ու բաց վանկում արդյոք կարող են իբրև այդպիսիք դիտվել, թե դրանք լեզվական մեկ միավոր են



միայն բաղաձայնից առաջ: Այդ առթիվ վկայակոչում է Յուրբշմանի, Մեյեի, Աճառյանի կարծիքները և դրանց համաձայնում վերապահությամբ: Այսպես՝ ի լրումն վերը նշված գիտնականների կարծիքների՝ բերում է նոր փաստեր ու հիմնավորում, որ **այ**-ը երկբարբառ է միայն բաղաձայնից առաջ, **ոյ** հնչյունակապակցությունը ևս նույն արժեքով է հանդես գալիս բառի տարբեր դիրքերում, ինչպես որ **այ**-ը:

**Աւ, իւ, եւ** հնչյունակապակցությունների մասին տարբեր կարծիքներ են հայտնել Յուրբշմանը և Մեյեին: Է. Աղայանը հանգամանորեն ներկայացնում է նրանց կարծիքները (տե՛ս էջ 116-122) ու պնդում, թե իրավացի է Յուրբշմանը, որը բաղաձայնից առաջ դրանք երկբարբառ է դիտում, սակայն հիմնավոր է համարում նաև Աճառյանի այն կարծիքը, թե դրանք երկբարբառ են նաև հոգնակի գործիականում (*քաղաքաւք, բանիւք*):

Այնուհետև ուսումնասիրությունը շարունակում է Աճառյանի՝ երկբարբառներ համարած հնչյունակապակցությունների շարքում՝ **եա, էա, եի, իա, էի, էո, էու, իե, իէ, իո, իու**: Լեզվական փաստերով, հնչյունափոխական օրենքներով, օտար լեզուներից քաղված փոխառությունների տառադարձումներով հիմնավորում է, որ երկբարբառ է **եա**-ն, իսկ **իա, իո, իե, իու, էի** հնչյունակապակցությունները երկբարբառ չի համարում այն պարզ պատճառով, որ պատմական հնչյունափոխությամբ դրանք պարզ ձայնավոր չեն դառնում, մի բան, որ հատուկ է գրաբարի բոլոր երկբարբառներին, այլ դրանք տարբեր վանկեր կազմող ձայնավորներ են: Այնուհետև հակադրվելով Աճառյանին՝ հեղինակը **ուա, ուե, ուի, ուո** հնչյունակապակցությունները երկբարբառներ է դիտել՝ հիմնավորելով, որ դրանք մեկ վանկ են կազմում, մինչդեռ Աճառյանը գտնում էր, որ դրանք երկու ձայնավորների կապակցություններ են և երկու վանկ են կազմում (տե՛ս էջ 130-131):

Ինչ մնում է եռբարբառներ դիտված **եաւ, եայ, ուաւ, ուայ, ուոյ** հնչյունակապակցություններին, ապա Է. Աղայանը դրանցից եռբարբառներ է դիտել միայն **եաւ, եայ, ուայ**, այն էլ միայն փակ վանկում. այսպես՝ **ուաւ**-ը փակ վանկում կարող է հանդես գալ միայն մի քանի բառերի գործիականում (*հովուաւք*), իսկ **ուոյ**-ը այն բառերի սեռականում, որոնք հոդ են ստացել (*պատուոյն, պատուոյս*) (տե՛ս էջ 132):

«Այս բոլորը, հանդես գալով բառավերջում (**սեաւ, կեայ, տուաւ, տուայ, պատուոյ և այլն**), բնականաբար կազմում են երկբարբառի ու բաղաձայն ձայնորդի կապակցություն, քանի որ վերջահանգ յ-ն և լ-ն, ինչպես ցույց ենք տվել, բաղաձայն են եղել: Նշանակում է՝ այդ կապակցությունները եռբարբառ կարող ենք դիտել միայն փակ վանկում (բաղաձայնից անմիջապես առաջ): Այսպիսով, այժմ արդեն ստուգված տվյալների հիման վրա, կարող ենք ընդունել, որ դասական հայերենն ուներ **եա, ուա, ուե, ուի, ուո, այ, աւ, եւ, ոյ, իւ** երկբարբառները և **եաւ, եայ, ուայ, ուաւ, ուոյ** եռբարբառները» (էջ 132):

«Երկբարբառներ» ենթազվիսի վերջին ուսումնասիրությունը վերաբերում է Է-ին. դասական հայերենում պա՞րզ ձայնավոր է այն, թե՞ երկբարբառ: Նախքան այդ հարցին պատասխանելը գիտնականն իր առջև խնդիր է դնում՝ պարզել է-ի վանկաբնի և իմաստազատիչ դերի ոլորտը:

Այդ նպատակի համար նա ներկայացնում է նվազագույն հակադրության շարքեր, որոնցում է-ն հանդես է գալիս պահանջվող բոլոր դիրքերում՝ բառասկզբում (**էջ-աջ, էր-իր, էշ-ուշ**), բառամիջում (**հէն-հան, քէն-քան, գէր-գիր**), բառի վերջում (**ծովէ-ծովու, բանէ-բանի, գայլէ-գայլոյ**), որոնցում է-ն հակադրվում է միայն ձայնավորներին: Այնուհետև նվազագույն հակադրության շարքեր է ներկայացնում երկբարբառների հետ (**էր-այր, գէտ-գիտ, հրէ-հրեայ**):

Հայտնի է, որ է-ն երկբարբառ է եղել մեր լեզվի վաղնջական շրջանում, այնուհետև այն վերածվել է պարզ ձայնավորի, այդ կարծիքին է եղել նաև Է. Աղայանը, սակայն սույն ուսումնասիրությամբ փոխել է իր կարծիքը. «Ինչ վերաբերում է դասական գրաբար շրջանին, ապա տարածված կարծիքն այն է, որ նա եղել է պարզ ձայնավոր և հակադրվել է Ե-ին, որպես փակ ձայնավոր: *Թեև մենք էլ այդ կարծիքին ենք եղել* (ընդգծումը մերն է - Թ. Շ.), սակայն փաստերն այժմ մեզ հարկադրում են վերանայել այդ կարծիքը» (էջ 134):

Իբրև հիմնավորում բերում է շեշտից կախված հնչյունափոխության օրենքները, ըստ որոնց՝ պարզ ձայնավորները շեշտը կորցնելիս սղվում են կամ վերածվում ը-ի, իսկ երկբարբառները շեշտը կորցնելիս վերածվում են ձայնավորի: Է-ն շեշտը կորցնելիս դառնում է **ի՝ կէգ-կիգել, մէջ-միջոց, սէր-սիրո** և այլն: Հենց այս երևույթն է հիմք տալիս անվանի գիտնականին փոխելու իր կարծիքը և է-ն դիտելու երկբարբառ:

Անառարկելի ճշմարտություն համարելով այն փաստը, որ է-ն պարզ ձայնավոր է արտասանվել V դարի երկրորդ կեսից ոչ շուտ, միաժամանակ գրում է, որ մեսրոպյան շրջանում էլ անվերապահորեն չէր կարող է-ն երկբարբառային արտասանություն ունենալ, և քանի որ ճշգրիտ փաստեր չկան, ուստի գտնում է, որ է-ն V դարի առաջին կեսին արտասանվել է ոչ թե մաքուր երկբարբառ, այլ երկբարբառակերպ:

Այսպիսով՝ երկբարբառների և եռբարբառների շարքում ավելացնում է մի նոր տեսակ՝ երկբարբառակերպ: Եվ քանի որ է-ն մի ուրիշ ձայնորդի հետ հանդես է գալիս մեկ այլ վանկաբնում (**ուէ**), դա էլ անվանում է եռբարբառակերպ:

Վերջում Է. Աղայանը ներկայացնում է դասական հայերենին հատուկ իր տարբերակած վանկաբնային հնչույթները.

ա) ձայնավորներ՝ /Ա/, /Ե/, /Ո/, /Ը/, /Ի/, /Ու/

բ) երկբարբառներ՝ /ԵԱ/, /ՈւԱ/, /ՈւԵ/, /ՈւԻ/, /ՈւՈ/, /ԱՅ/, /ԱԻ/, /ԵԻ/, /ՈՅ/, /ԻԻ/

գ) երկբարբառակերպ՝ /Է/

դ) եռբարբառներ՝ /ԵԱԻ/, /ԵԱՅ/, /ՈւԱՅ/, /ՈւԱԻ/, /ՈՒՈՅ/, եռբարբառակերպ՝ /ՈՒԷ/ (էջ 140):

Բաղաձայնական համակարգի քննությունը Է. Աղայանը սկսում է եռաստիճան և երկաստիճան համակարգերից, քանի որ դրանք ունեին ձայնային հակադրություն ուղղահայաց շարքերում, իսկ հորիզոնական շարքերում՝ ընդհանրություններ ըստ արտաբերման եղանակի և տեղի՝

ձայնեղ	խուլ	շնչեղ խուլ
բ	պ	փ
գ	կ	ք
դ	տ	թ
ծ	ծ	ց
ջ	ճ	չ

ձայնեղ	խուլ
վ	-
-	խ
զ	ս
ժ	շ
-	հ

Եռաստիճան բաղաձայնական համակարգում կա երեք կարգի հակադրություն՝ ձայնեղություն (I շարք), խլություն (II շարք) և շնչեղություն (III շարք):

Եռաստիճան և երկաստիճան համակարգերի հորիզոնական շարքերի պայթական և շփական հնչյունները տարբերակում է ըստ արտաբերման տեղի՝ շրթնային (**բ, պ, փ**), առաջնալեզվային (**դ, տ, թ**), ետնալեզվային (**գ, կ, ք**), սրանցից առանձնացնում է մյուս առաջնալեզվային բաղաձայնները, քանի որ դրանք բարդ են՝ **ծ, ժ, ց, ճ, չ** (կիսապայթական կամ կիսաշփական):

Ըստ արտաբերման տեղի՝ առանձնացվել են նաև երկաստիճան բաղաձայնները՝ շրթային՝ **վ**, առաջնալեզվային՝ **զ, ս, ժ, շ**, ետնալեզվային՝ **խ**, կոկորդային՝ **հ**:

Այնուհետև, ելնելով վերը բերված խմբավորումներից, անցնում է այդ հնչյունների իմաստազատիչ արժեքի բացահայտմանը՝ պայթական հնչյուններով սկսվող երեք շարքերի հակադրությամբ՝ **բար, պար, փար, դուր, տուր, թուր, գան, կան, քան**, և ապացուցում է, որ դրանցից յուրաքանչյուրն իր իմաստազատիչ դերով հակադրվում է մյուսին, սակայն այդ հակադրությունները միատարր չեն, օրինակ՝ **բ-պ, բ-փ** հակադրություններ չկան բառամիջում և վերջում կամ հանդես են գալիս սահմանափակ դեպքերում՝ **դ, թ, մ** ձայնորդներից հետո:

Հնդեվրոպական արմատների ստուգաբանության հիման վրա Է. Աղայանը գրում է. «Համեմատական քերականությամբ այդ բանը հեշտությամբ պարզաբանվում է. հնիս. բառակզբի **bh** հայերենում դառնում է **բ**, իսկ բառամիջում ու վերջում՝ ձայնավորից հետո՝ **ւ, վ**, ձայնորդից հետո՝ **ք**, հնիս. **b**-ն բոլոր դեպքերում դառնում է **պ**, հետևաբար այդ օրենքի համաձայն էլ հին հայերենում **բ** չէր կարող լինել արմատական բառերի մեջ՝ ձայնավորից հետո» (էջ 143):

Սակայն դասական հայերենում բարդ և ածանցավոր բառերի, ինչպես նաև հունական և ասորական փոխառությունների ուսումնասիրությունը պարզել է, որ համաժամանակյա կտրվածքում **բ, պ, փ** շարքում **բ**-ն լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ չի գտնվում **պ** և **փ** բաղաձայնների հետ, ուստի սրանք երեքն էլ ինքնուրույն հնչույթներ են (տես էջ 144): Այնուամենայնիվ Աղայանը գտնում է, որ մեր լեզվի հնագույն շրջանում **բ**-ն և **վ(ւ)**-ը եղել են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, ուստի ենթահնչույթներ են եղել:

Ինչ վերաբերում է **դ-տ-թ** (*դի-տի-թի*), **գ-կ-ք**, (*գեր-կեր, երկ-երգ, գեր-*

քեր) և այլն հակադրություններին, ապա դրանցից ոչ մեկում լրացուցիչ բաշխում չկա, ուստի դրանք առանձին հնչույթներ են:

Այս համատեքստում Աղայանն անդրադառնում է նաև անցյալ դարի 50-60-ական թվականներին սուր բանավեճի առիթ դարձած գրաբարի՝ ձայնեղ պայթականների և կիսապայթականների շնչեղ ձայնեղ կամ բարդ հնչյուն եղած լինելու հարցին, որն այնպիսի հնչեղություն ունեցավ ու կրքեր բորբոքեց, որ Հայաստանից տեղափոխվեց Մոսկվա՝ “Вопросы языкознания”-ի էջերը:

Է. Աղայանն այդ հարցի մասին կարծիքները խմբավորել է երեք սկզբունքների ներքո.

«1. Գրաբարի ձայնեղ պայթականները շնչեղացած չեն եղել, և ժամանակակից հայերեն բարբառների շնչեղացած ձայնեղներն առաջացել են հետագա շրջանում:

2. Գրաբարի ձայնեղ պայթականները շնչեղացած չեն եղել, ժամանակակից հայերեն բարբառների շնչեղացածները պահպանվել են հնդեվրոպական վիճակից, իսկ գրաբարյան համակարգը ներկայացնում է դրա հետագա փոփոխությունը:

3. Գրաբարի ձայնեղ պայթականները շնչեղացած են եղել, այսինքն՝ պահպանել են հնդեվրոպական համապատասխան պայթականներն անփոփոխ, իսկ բարբառների հնչույթային համակարգը դրա հետագա զարգացումն է» (էջ 148):

Այս տեսակետները լուրջ քննարկումների են արժանացել թե՛ օտարազգի, թե՛ հայ գիտնականների կողմից (Հյուբշման, Պեդերսեն, Մեյե, Աճառյան, Բենվեմիստ, Ֆոգտ, Ջահուկյան, Աղայան, Սևակ, Ղարիբյան և ուրիշներ):

Է. Աղայանի համարմամբ դրանցից ամենահավանականը առաջին տեսակետն է, որն էլ մեծ ճանաչում ու կողմնակիցներ է ունեցել: Երկրորդը քննության չի առնում այն պարզ պատճառով, որ եթե գրաբարի ձայնեղ պայթականները շնչեղացած չեն եղել, ապա ժամանակակից բարբառները, շրջանցելով գրաբարը, չէին կարող այն ժառանգել հնդեվրոպական վիճակից:

Երրորդ կարծիքը, թե գրաբարի ձայնեղները շնչեղացած են եղել, այսինքն՝ պահպանել են հնդեվրոպական համապատասխան պայթականներն անփոփոխ, անհավանական է, քանի որ հնդեվրոպական լեզվում շնչեղ ձայնեղներով կազմվել է քառաստիճան բաղաձայնական համակարգ, եթե գրաբարում որոշ ձայնեղներ ինչ-որ չափով շնչեղացած են արտասանվել, ապա դա ոչինչ չի նշանակում, քանի որ դրանք հնչույթային արժեք, հետևաբար և իմաստազատիչ դեր չեն ունեցել:

Աղայանն իրավացիորեն նկատում է, որ հայոց լեզվի պատմության ողջ ընթացքում պայթական հնչյունների ձայնեղությունը երբեք երկրորդական հատկանիշ չի եղել, այն միշտ ունեցել է երկկողմ հակադրություն՝ ձայնեղություն-խլություն, խլությունն էլ իր հերթին՝ շնչեղ խլություն-ոչ շնչեղ խլություն, որոնք էլ հակադրվում են ուժեղ և թույլ հատկանիշների հակադրությամբ, ընդ որում՝ խուլերն ուժեղ են, իսկ ձայնեղները՝ թույլ: Օտարազգի գիտնականները ուժեղ և թույլ հատկանիշներն անվանում են

լարվածություն և ոչ լարվածություն: «Հին հայերենի պայթականների ու պայթաշփականների հետագա զարգացումը մեզ հիմք է տալիս պնդելու, որ նրանց լարվածություն-ոչ լարվածություն հատկանիշը կարևոր դեր է խաղացել... դասական գրաբարի պայթականների ու պայթաշփականների համակարգը հիմնված էր ձայնեղություն-խլություն հակադրության վրա, որը զուգորդվում էր նաև լարվածություն-ոչ լարվածություն հակադրությամբ: Սրան համապատասխան էլ դասական գրաբարի պայթականների ու պայթաշփականների հակադրությունների վերը հիշած համակարգն ենք ընդունում, այն է՝ **Բ:Պ:Փ, Դ:Տ:Թ, Գ:Կ:Ք, Չ:Ծ:Ց, Ջ:Ճ:Չ**» (էջ 155):

Շփական հնչյունների համակարգը պայթականների համեմատությամբ աղքատ է, արդեն ասվել է, որ երեք հնչյուն իրենց հակադիր ձայնեղ կամ խուլ միավորը չունեն: Աղայանը գտնում է, որ **ժ** հնչյունը հանդես է գալիս բնիկ հայկական միայն **իժ** բառում, այն ավելի հաճախական է իրանական փոխառությունների մեջ և դրանց ազդեցությամբ էլ տարածվել է, ինչ մնում է **իժ** բառի **ժ**-ին, ապա գտնում է, որ այն **ջ** հնչյունի (**դ+ժ**) պարզեցման արդյունք է:

Դասական գրաբարի 7 շփականներից 4-ը առաջնալեզվային են՝ **զ-ս, ժ-շ, մեկը՝** ետնալեզվային (**խ**), մեկը՝ կոկորդային (**հ**), մեկը՝ շրթնատամնային (**վ**): Առաջնալեզվային հնչյունները տարբերակվում են նաև սուլականությամբ (**զ**-ձայնեղ, **ս**-խուլ) և շչականությամբ (**ժ**-ձայնեղ, **շ**-խուլ):

Այնուհետև, սրանց հնչույթային արժեքը բացահայտելու համար բերվում են նվազագույն հակադրություններ՝ բառի տարբեր դիրքերում՝ **սար-չար, խիստ-խիշտ, զանգ-ժանգ... սուր-զուր, յոյս-յոյզ, կես-կեզ** և այլն:

Բերված սահմանափակ զույգերի քննությունից Աղայանը եզրակացնում է, որ **ժ**-ի սակավ գործածությունը պայմանավորված է նրանով, որ այն իրանական փոխառությունների ազդեցությամբ առաջացած հնչույթ է. բացի այդ՝ **ս-զ**-ն հաճախ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ են գտնվում, և բերում է դրանց հանդես գալու ոլորտների համապատասխան օրինակներ (տե՛ս էջ 157): Է. Աղայանը եզրակացնում է, որ **զ-ս**-ի լրացուցիչ բաշխման հարաբերությունը դրսևորվում է հետևյալ կերպ. **զ**-ն ձայնեղների հետ է հարաբերվում, **ս**-ն՝ խուլերի, սակայն դասական շրջանում ձևաբանական գործոնների և փոխառությունների հետևանքով այս օրինաչափությունը խախտվել է:

Աղայանը գտնում է, որ սկզբնապես լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ են գտնվել նաև **ժ-շ** շփական (ձայնեղ-խուլ) հնչյունները, այնուհետև ավելացնում է, որ **շ** ունեցող միայն երկու բառ է գտել՝ **Աշդահակ** և **պատշգամբ**: Վկայակոչելով Աճառյանին՝ առաջինը սխալ ուղղագրություն է համարում և գտնում է, որ պետք է լինի **Աժդահակ**, իսկ երկրորդը եղել է նաև **պատռշկամ, պատռշկամբ**, և եզրակացնում է, որ այստեղ էլ առկա է **ժ**-ի և **շ**-ի չեզոք հարաբերություն շչական-պայթական կապակցություններում, իսկ մյուս դեպքերում՝ առանձին հնչույթների հարաբերություն (տե՛ս էջ 160):

Ետնալեզվային **խ** հնչյունի հնչույթային արժեքը գտնելու համար հեղինակն այն հակադրում է մի կողմից ետնալեզվային պայթականներին, մյուս կողմից՝ շփական հնչյուններին, այն պարզ տրամաբանությամբ, որ

**խ**-ն գրաբարում չունի իր ծայնեղ հակադրությունը, այսպես՝ **ծախ-ծագ**, **խութ-գութ**, **ուրախ-ուրագ** և այլն, ինչպես նաև՝ **խեղ-շեղ**, **ախտ-աստ**, **մուխ-մուզ** և այլն: Բերված օրինակներից Աղայանը ճշմարտացիորեն հանգում է այն մտքին, որ թե՛ պայթականների, թե՛ շփականների հակադրության մեջ **խ**-ն դրսևորում է իմաստազատիչ արժեք, այսինքն՝ հնչույթ է և ոչ մի շարքում չունի լրացուցիչ բաշխման հարաբերություն:

**Յ**-ի հնչույթային արժեքը որոշելու համար հակադրություններ է ներկայացնում շփականների հետ, քանի որ այն նվազագույն հակադրության ծայնեղ տարբերակ չունի, պարզվում է, որ առաջնալեզվային շփականների հակադրության մեջ այն լիարժեք հնչույթ է և ունի իմաստատարբերակիչ արժեք՝ **հայր-սայր**, **հուր-զուր**, **համ-ժամ**, **հուն-շուն** (բառասկիզբ), **ահա-ասա**, **եհան-եզան**, **խահե-խաժե**, **բահե-բաժե** (բառամեջ) և **կահկազ**, **մահ-մազ**, **խահ-խաժ**, **բահ-բաշ** (բառավերջ):

**Յ**-ի հնչույթային արժեքը որոշ չափով տարակուսանքի առիթ է տալիս **խ** և **յ** հնչույթների հակադրության մեջ: Իհարկե, Աղայանը բերում է **հեղ-խեղ**, **բահե-բախե**, **ահ-ախ** տարբեր դիրքերի հակադրություններ, սակայն բերում է նաև այլ օրինակներ (**հմայեմ-խմայեմ**, **հաշմ-խաշմ**, **հաշումն** «հալումնաշ լինելը»-**խաշումն**), որոնցում կարծես թե **հ**-ն **խ**-ի հետ ազատ տարբերակների հարաբերության մեջ է գտնվել, սակայն այդ կասկածը ցրում է՝ հիմնավորելով, որ դրանք հետագա շրջանում կատարված բարբառային աղավաղումներ են, իսկ **հրասախ-խրասախ**, **խոհկեր** «խոհարար»-**խոխկեր**, **խոհեր** «հոտած ցեխ» և նման բառերում ունենք հետընթաց լիակատար առնմանում, որից հետևում է, որ բոլոր շփականների հակադրությամբ **խ**-ն հնչույթ է: **Յ-յ** հակադրության մեջ կան մի շարք դժվարություններ, որոնք առնչվում են այդ հնչյունների՝ պատմական հնչյունափոխությամբ պայմանավորված շփոթի հետ: Լեզվի պատմության ընթացքում հաճախ գրիչները իրենք չեն կարողացել ճիշտ կողմնորոշվել **հ-յ**-ի ուղղագրության մեջ (**հորու-յորու** (*խորթ հայր*), **հաւ-յաւ** (*ծայր*) և այլն): Կամ **հետ** և **յետ** բառերի տարբերակումներում էլ նախնականը համարում է **հետ**-ը, իսկ **յետ** բառի մեջ, ըստ գիտնականի, տեղի է ունեցել **յ**-ի հավելում, **հ**-ի անկում: Երբեմն հանդիպում են նաև զուգահեռ ձևեր, որոնցում հավելավոր ձևերը հետագայում են առաջացել՝ **արաւր-հարօր**, **յարօր**, և դասական շրջանի համար կարևորություն չեն ներկայացնում: Այս ամենը մի կողմ թողնելով՝ ի վերջո Աղայանը բերում է **հ-յ** հակադրության զույգեր՝ **հաշտ-յաշտ** (զոհ), **բահ-բայ**, **գահի-գայի**, որոնցով ամրագրվում է, որ **հ**-ն դասական գրաբարում հնչույթ է և ունի իմաստազատիչ արժեք:

Այս բաժնում անվանի գիտնականը քննության է առնում նաև պայթաշփական հնչյունների կազմության հարցը: Բանն այն է, որ **ծ**, **ժ**, **ց**, **ջ**, **ճ**, **չ** հնչույթների վերաբերյալ կան տարբեր կարծիքներ. դրանք մեկական հնչույթներ են՝ բարդ կազմությամբ, թե՞ պայթական-շփական կապակցություններ են՝ **դզ**, **տս**, **տսհ**, **դժ**, **տշ**, **տշհ**:

Քանի որ փորձառական ուսումնասիրությամբ այդ հարցին հնարավոր չէ պատասխան տալ, ուստի Աղայանը կրկին դիմում է հնչյունների հակադրման մեթոդին՝ **ծագ-ծագ**, **աւծ-աւծ**, **անծին-անծին**, **ծակ-ճակ**, **որոց-որոճ**, **ցիր-չիր**, **կոչ-կոժ** և այլն, և ցույց տալիս, որ այդ բաղաձայններ-

րը միմյանց հակադրվում են իմաստազատիչ դերով, ուստի հնչույթներ են և ոչ թե հնչյունակապակցություններ:

Չայնորդների ըմբռնման հարցում բազմաթիվ տարածայնություններ են եղել թե՛ հնչյունաբանական, թե՛ հնչույթաբանական մակարդակներում կատարված ուսումնասիրությունների մեջ:

Է. Աղայանը գտնում է, որ ձայնորդները արտասանական տեսակետից կարող են վերածվել թե՛ ձայնավորի, թե՛ բաղաձայնի: Նման պարագայում հնչույթաբանորեն մեկ միավոր են, իսկ հնչյունախոսության մեջ՝ երկու:

Գրաբարի ձայնորդների մեջ մտնում են **լ, դ, մ, ն, ռ, ռ, յ, լ** բաղաձայնները: Սրանցից առաջին վեցը հանդես են գալիս միայն որպես բաղաձայններ համապատասխան հակադրությամբ (**լ-դ, մ-ն, ռ-ռ**), իսկ վերջին երկուսը՝ **յ** և **լ**, և՛ իբրև բաղաձայն, և՛ իբրև ձայնավոր:

Որ **դ-ն** շփական ձայնեղ չի եղել դասական հայերենում, Աղայանը բացատրում է իրանական փոխառություններում կատարված հնչյունափոխությունների օրինաչափություններով ու անցնում **լ-դ** հնչույթաբանական հակադիր զույգերի քննությանը՝ **գոլ-գող, հոլով-հողով, ալիք-աղիք**: Ինչպես տեսնում ենք, բառի վերջում **լ-դ-ն** հակադրություն չի դրսևորում, իսկ բառամիջի հակադրություններն էլ, ըստ Է. Աղայանի բերած շարքերի, սահմանափակ են (տե՛ս էջ 174), մի շարք դեպքերում էլ իմաստազատիչ դեր չունեն, օրինակ՝ **ի** ձայնավորից հետո՝ **ջիլ-ջիղ, շիլ-շիղ (շեղ)**: Ինչպես հայտնի է, հայերենում **դ-ով** սկսվող բառեր չեն եղել, այդ պատճառով էլ բառասկզբում այն նվազագույն հակադրություն չի կազմում: Հետագայում **դ-ով** սկսվող բառերը ստացել են **ե** հենարանը՝ **դուկն>եղունգն** և այլն: **Ղ-ով** սկսվող բառերի մի մասն էլ հետագա դարերում կատարված փոխառություններ են՝ **ղալամ, դազա** և այլն:

**Ղ-ի** սահմանափակ գործածությունները Աղայանը բացատրում է այլ գործոններով ևս: Այսպես՝ **յ-ից** հետո սովորաբար հանդես է գալիս **լ**, իսկ **լ-ից** հետո՝ **դ (այլ, գայլ, փայր, աւղ, ցաւղ, շիւղ)**: Նման երևույթները Աղայանը համարում է կիսառլորտային հարաբերությամբ ենթահնչույթային կիրառություններ:

Գիտնականը նկատել է **լ-ի** սահմանափակության մի երևույթ ևս. հնդեվրոպական ծագում ունեցող բառերի մեջ այդ հնչյունը չէր կարող հանդես գալ բաղաձայնից առաջ կամ հետո: Եթե հետագայում հայտնվել է, ապա դա եղել է շեշտակիր ձայնավորի հնչյունափոխության հետևանքով: Այսպես՝ **կուլ-կլանել, փուլ-փլանել, զիլ-զլորել, բուլ-բլուր** և այլն: Նման դեպքերում ավելի օրինաչափական է **դ-ի** հանդես գալը՝ **աղտ, գաղտ, մեղկ, քաղց, ստեղն, ողբ** և այլն: Այստեղ ևս գործ ունենք կիսառլորտային դրությամբ ենթահնչույթների հետ:

Վերջում Է. Աղայանը եզրակացնում է, որ **լ-դ** հնչյունները հանդես են գալիս երեք կարգի հարաբերությամբ՝ հնչույթային, ենթահնչույթային և չեզոք, սակայն ոչ հավասար հաճախականությամբ. «Քանի որ ըստ գործածության հաճախականության ամենից ավելի շատ են ձայնավորների միջև և բառավերջում՝ ձայնավորից հետո կիրառության դեպքերը, մի կողմից, և ենթահնչույթային ու չեզոք հարաբերություններն էլ խախտման պրոցեսում են գտնվում, ապա կարող ենք ընդունել, որ **լ-դ** դասական հայերենում ինքնուրույն հնչույթներ են» (էջ130):

Այնուհետև անցնում է **ր-ռ** թրթռուն բաղաձայնների քննությանը և բերում հակադրական զույգեր՝ **արու-առու, ճար-ճառ, սեր-սեռ** և այլն: Չնայած որոշ սահմանափակումներին՝ Աղայանի վերլուծությունները հանգում են այն մտքին, որ դասական գրաբարում **ր-ն** և **ռ-ն** ունեն իմաստազատիչ արժեք և ինքնուրույն հնչույթներ են: Չայնորդների հաջորդ զույգը **մ-ն** հակադրությունն է, որը դրսևորվում է բոլոր դիրքերում՝ **ներ-մեր, նիգ-միգ, հուն-հում, գան-գամ, հանեն-համեն, ինն-ինն**:

Աղայանը միակ սահմանափակությունը տեսնում է ռնգային+շրթնային պայթական կապակցության մեջ, որը հանգեցնում է երկու հնչույթների չեզոք դրության: Այն տեղի է ունենում պայթական շրթնային **բ**-ի ազդեցությամբ, երբ առաջնալեզվային **ն**-ն փոխազդեցական հնչյունափոխության մասնակի հետընթաց առնմանամբ դառնում է **մ**. օրինակ՝ **գառն-գառամբ, անբիծ-ամբիծ, անբասիր-ամբասիր** և այլն: Սրան հակառակ՝ շփական **վ** և **լ** հնչյուններից առաջ **մ**-ն երբեք հանդես չի գալիս: Այստեղից գիտնականը եզրակացնում է, որ շրթնային բաղաձայններից առաջ էլ **մ** և **ն**-ը ռնգային են և գտնվում են չեզոք գոտում, մնացած բոլոր դիրքերում ինքնուրույն հնչույթներ են:

Գիտնականը հետաքրքրական դիտարկումներ ունի **ւ** ձայնորդի մասին: Նա իրավացիորեն նկատել է, որ այն տարբեր ոլորտներում տարբեր արժեք ունի. կարող է հանդես գալ բաղաձայնի, վանկարար ձայնավորի, ինչպես նաև երկբարբառի դերում: Այնուհետև գտնում է, որ չնայած գրության տարբերությանը՝ այն հնչույթաբանորեն նույնանում է **վ**-ին: Ասվածը հիմնավորում է գործիականի կազմությամբ: Ինչպես հայտնի է, արտաքին թեքումների ժամանակ գործիականը ստանում է **ւ** կամ **վ** հոլովակազմիչը: Բացի **ո** ձայնավորից (տվյալ դեպքում՝ հոլովիչ)՝ մնացած ձայնավորներից (այսինքն՝ **ա, ի, ե** հոլովիչներից) հետո հանդես է գալիս **ւ** (**տիտանաւ, սրտիւ, արդեւք**), **ո**-ից հետո հանդես է գալիս **վ** (**գետով, գործով**), **ւ**-ի դեպքում կդառնա **ու** (**ո+ւ**), իսկ **ու** հոլովման դեպքում հոլովակազմիչ հանդես չի գալիս, քանի որ **ու**-ն իր կազմում արդեն իսկ **ւ** ունի, և այստեղ **ւ**-ը և **ու**-ն միևնույն ձայնորդի տարբերակներ են: Ասվածից հետևում է, որ նման կիրառության մեջ **վ**-ն և **ւ**-ը նույնանում են: Այսինքն՝ բառի վերջում և երկու բաղաձայնների միջև (**թագաւոր, կաքաւ, տիւ** և այլն) **ւ**-ը բաղաձայն է և հավասարարժեք է **մով, կով, գլխով** բառերի **վ**-ին. **ւ**-ը չի կարող հանդես գալ նաև բառասկզբում. արտասանական տեսակետից կարևոր է այն հանգամանքը, որ բառասկզբում միշտ հանդես է գալիս **վ**: Դասական հայերենում կա մի կարևոր իրողություն ևս, դա այն է, որ բառասկզբում **ու**-ն ոչ մի ձայնավորի հետ երկբարբառային միասնություն չի կազմում՝ **ուա, ուե, ուի, ուո, ուէ**, այսինքն՝ բառասկզբում **ւ**-ը միշտ բաղաձայն է: Բառամիջում ստուգաբանական ուղղագրությամբ կարող է լինել **վ**՝ **ոսկեվազ, անվարժ** և այլն: Բերված օրինակներից պարզ է դառնում, որ միատեսակ պայմաններում **վ**-ւ հակադրություն չունենք. այստեղից հետևում է, որ դրանք միևնույն բաղաձայններն են, որն Աղայանն իբրև հնչույթ նշանակում է **վ** տառով: Այնուհետև գրում է. «Քանի որ ունենք **ւ** ձայնորդ, որպես **վ** բաղաձայն, իսկ մյուս կողմից՝ **ւ** ձայնորդ՝ որպես երկբարբառի բաղադրիչ, ապա միանգամայն պարզ է, որ **ւ**-ն և **վ**-ն ենթահնչույթային հարաբերության մեջ են գտնվում» (էջ 188): Ենթահնչույթային հարաբերություն է



դրսևորվում ու ձայնավորի հետ (**անուան, նուէր, տան, բեր** և այլն):

Գրաբարի հնչույթական համակարգին նվիրված բազմապլան ու բազմաբովանդակ ուսումնասիրություններից հետո է. Աղայանը ներկայացնում է գրաբարի հնչույթների հետևյալ տեսակները.

«1) Չայնավորներ` /Ա/, /Ե/, /Ի/, /Ո/, /ու/, /Ը/ - 6

2) Բաղաձայններ` /Բ/, /Գ/, /Դ/, /Զ/, /Ծ/, /Ժ/, /Խ/, /Ծ/, /Կ/, /Ղ/, /Ջ/, /Կ/, /Յ/, /Ծ/, /Շ/, /Պ/, /Ջ/, /Ս/, /Վ/, /Տ/, /Յ/, /Փ/, /Բ/ - 23

3) Չայնորդներ` /Լ/, /Ղ/, /Ր/, /Ռ/, /Ս/, /Ն/, /Լ/, /Ի/ - 8

Ընդամենը լինում է 37, բայց որովհետև ու, վ, լ և ի, ի, յ ներկայացնում են մեկական հնչույթ, ուստի և կունենանք  $33+(2)^1+10$  երկբարբառ+5 եռաբարբառ+1 երկբարբառակերպ +1 եռաբարբառակերպ = 52» (էջ 191): Դրանք են.

Բավականին հետաքրքրական է է. Աղայանի` գրաբարի հնչույթների տարբերակիչ հատկանիշների համակարգը:

Աշխարհի լեզուների հնչույթների տարբերակիչ հատկանիշների դասակարգմամբ զբաղվել են շատ անվանի գիտնականներ` Յակոբսոն, Ֆանտ, Յալլե, Չերրի: Այս հեղինակները միասին մշակել են 12 հակադրական հատկանիշներ, որոնցով կարելի է տարբերակել աշխարհի բոլոր լեզուների հնչույթային համակարգերի հատկանիշները (տե՛ս էջ194):

1. ձայնավորություն-ոչ ձայնավորություն,
2. բաղաձայնություն-ոչ բաղաձայնություն,
3. ընդհատականություն-անընդհատականություն,
4. ծեքականություն-ոչ ծեքականություն,
5. հստակություն- աղոտություն,
6. ձայնեղություն- խլություն,
7. թավություն- անոսրություն,
8. ցածր տոնայնություն-բարձր տոնայնություն,
9. բենոլ տոնայնություն-հասարակ տոնայնություն,
10. դիեզ տոնայնություն-հասարակ տոնայնություն,
11. լարվածություն-ոչ լարվածություն,
12. ռնգայնություն-ոչ ռնգայնություն:

Բնականաբար այդ բոլոր հատկանիշները անվերապահորեն չեն կարող վերաբերել բոլոր լեզուներին, այլ դրանց մեջ կարող են լինել համընդհանուր և մասնավոր տարբերակիչ հատկանիշներ, ուստի է. Աղայանն այս բաժնում քննել է դասական գրաբարի հնչույթների և՛ ընդհանուր, և՛ մասնավոր տարբերակիչ հատկանիշները: Ըստ նրա դասակարգման` դասական գրաբարի հնչույթային համակարգն ունի ևս մի քանի մասնավոր տարբերակիչ հատկանիշներ, դրանք են` շնչեղություն – ոչ շնչեղություն, պայթաշփականություն – ոչ պայթաշփականություն, միաթթություն-բազմաթթություն: Այսինքն` Յակոբսոնի և նրա խմբի ներկայացրած տարբերակիչ հատկանիշներից հայերենը չունի ծեքականություն–ոչ ծեքականություն, դիեզ տոնայնություն – հասարակ տոնայնություն հակադիր հատկանիշները:

Խոսելով դասական գրաբարի հնչյունների` վերը հիշատակած հատկանիշների մասին` Աղայանը տողատակին (տե՛ս էջ 199) «խոստովանում է», որ այդ հատկանիշների վերագրումը ենթադրական է այն պարզ պատ-

ճառով, որ իր ձեռքի տակ փորձառական տվյալներ չունի և առաջնորդվել է ընդհանուր հայկական արտասանությամբ:

Հնչույթների տարբերակիչ տարրերը բացահայտելու համար Է. Աղայանն առաջնորդվել է Յակոբսոնի՝ հնչույթների երկատման տեսությամբ, «...որի համաձայն յուրաքանչյուր հնչույթ հաջորդաբար առնվում է երկու տարրերի հակադրության մեջ, մինչև որ սպառվում են բոլոր տարրերը: Այսպես, օրինակ առնելով ա հնչույթը, մենք կարող ենք հարցնել՝ ձայնավոր է, թե՞ բաղաձայն և պատասխանը՝ դրական կամ բացասական՝ նշանակել + (դրական) կամ – (բացասական) նշանով, այնուհետև կարող ենք պարզել՝ թա՞վ է, թե՞ անոսր, ապա՝ ցա՞ծր տոնայնություն ունի, թե՞ բարձր և այլն: Այն դեպքում, երբ այս կամ այն հակադրությունը չի կարող տարածվել տվյալ հնչույթի վրա + կամ – ի փոխարեն նշանակվում է 0» (էջ 200):

Այնուհետև Է. Աղայանը ներկայացնում է ողջ հնչույթական համակարգը երեք առանձին (1. ձայնավորներ, 2. ձայնորդներ, 3. բաղաձայններ) տախտակների տեսքով (տես էջ 200-201), որոնցում հստակորեն երևում են բոլոր այն ընդհանուր ու տարբերակիչ հատկանիշները, որոնք գոյություն ունեն առանձին միավորների միջև:

Տարբերակելով դասական գրաբարի բոլոր հնչույթների հատկանիշները՝ այնուհետև որոշում է, թե ինչ հատկանիշներով են հակադրվում, ինչո՞վ՝ ընդհանրանում:

Վկայակոչելով Տրուբեցկոյի՝ 3 կարգի հակադրությունների տարբերակումը՝ ինքն ընդունում է դրանցից երկուսը. 1) մասնական և 2) աստիճանավոր: Մի դեպքում համեմատվող միավորները հակադրվում են այս կամ այն հատկանիշի առկայությամբ կամ բացակայությամբ, երկրորդ դեպքում՝ տվյալ հատկանիշի առկայության աստիճանով (տես էջ 204):

Աղայանը սույն ուսումնասիրության մեջ քննարկման նյութ է դարձնում նաև հորանջի (յ) հարցը և իրավացիորեն գտնում է, որ այն հնչույթային արժեք չունի, այլ արտասանական երևույթ է:

Գրաբարի հնչույթային համակարգի ուսումնասիրությունը ավարտում է հնչույթների գործածության ոլորտի քննությամբ, և ըստ այդմ՝ տարբերակվում են մենոլորտ և տարոլորտ հնչույթներ:

Առանձնացվում է ձայնավորական ոլորտ, որում տվյալ հնչույթը վանկարար է, բաղաձայնական ոլորտ, որում հնչույթը վանկարար չէ և չի կարող վանկաբնի բաղադրիչ լինել, երրորդը ձայնորդային ոլորտն է, որում հնչույթը հանդես է գալիս իբրև վանկաբնի անդամ, բայց վանկարար չէ:

Ձայնավորական ոլորտն անվանում է գազաթնային, բաղաձայնականը՝ կողմնային, իսկ ձայնորդայինը՝ գազաթնամերձ կամ կենտրոնամերձ: Այս տարբերակումից հետո գտնում է, որ դասական գրաբարում մենոլորտ են միայն /Ա/, /Ե/, /Ո/, /Ը/ ձայնավորներն ու բոլոր երկբարբառները, ինչպես միայն բաղաձայնական ոլորտն ընդգրկող /Լ/, /Ղ/, /Ս/, /Ն/, /Ր/, /Ռ/ ձայնորդներն ու բոլոր բաղաձայնները:

Տարոլորտ է համարում /ՌԲ/ և /Ի/ ձայնորդները, քանի որ սրանց /ու/ և /ի/ ենթահնչույթները հանդես են գալիս ձայնավորական ոլորտում, /ւ/ և /ի/ ենթահնչույթները՝ ձայնորդային ոլորտում, իսկ /վ/ և /յ/ ենթահնչույթները՝ բաղաձայնական ոլորտում (տես էջ 214):

Չետսեւելով Տրուբեցկոյին, որը հնչույթաբանական տեսանկյունից հնչույթների համար տարբերակում է երկու կարգի դիրքեր՝ չեզոքացման (թույլ) և ուժեղության, ինքն ավելացնում է նաև բացառված դիրքը:

Չեզոք դիրքում հնչույթները հակադրություն չեն կազմում, ուժեղ դիրքում կազմում են, իսկ բացառված դիրքում հակադրված զույգերից ոչ մեկը չի կարող հանդես գալ և հնչույթային հակադրություն չի կազմում:

Ամփոփելով գրաբարի հնչույթային համակարգի վերաբերյալ Է. Աղայանի ուսումնասիրությունը՝ գտնում ենք, որ այն մի մեծարժէք ներդրում է գրաբարագիտության մեջ, որում ներկայացված են 5-րդ դարի դասական գրաբարի հնչույթների արտասանական ու ձայնային առանձնահատկությունները, դրանց հնչույթային արժէքը, առաջնային և երկրորդական հատկանիշները և դիրքային սահմանափակումները:

**Բանալի բառեր** – *դասական գրաբար, գրական լեզու, խոսակցական լեզու, հնչյուն, հնչյունաբանություն, հնչույթ, հնչույթաբանություն, հնչյունախոսություն, տարբերակիչ հատկանիշ, երկարբառներ, եռարարբառներ, երկարբառակերպ*

**ТЕРЕЗА ШАХВЕРДЯН – Фонетический строй грабара по Э. Агаяну.** – В «Грамматике древнеармянского языка» Э. Агаян раскрыл орфоэпические и фонетические особенности классического грабара, первичные и вторичные признаки звуков, условия их реализация и пр.

Хотя речь в монографии идёт о мёртвом языке и, следовательно, различные наблюдения сложно было подтвердить эмпирически, её научное качество несколько не уступает остальным работам выдающегося учёного в области общего языкознания, сравнительной грамматики, современного армянского языка, диалектологии и пр.

**Ключевые слова:** *классический грабар, литературный язык, разговорный язык, звук, фонетика, фонема, фонемология, фонология, дифференциальный признак, дифтонг, трифтонг, дифтонгоид*

**TEREZA SHAHVERDYAN – Old Armenian Phonemic System According to Edward Aghayan.** – “Grabar grammar” by Edward Aghayan is considered to be a valuable study which presents the phonetic peculiarities of the 5<sup>th</sup> century classical Grabar, their phonemic values, primary and secondary characteristic features, activities’ restrictions and the like.

The distinguished scholar had a lot of difficulties in his practice for he first of all dealt with non-living (so-called dead) language and therefore couldn’t give reasons for his achievements through experimental researches. Besides, the original language material was subject to perversions. However, Edward Aghayan, as a real talented scholar, was able to give an answer to intricate questions. His work is of great scientific value in accordance with various researches on General linguistics, Comparative grammar and Historical grammar, Modern grammar and Dialectology.

**Key words** – *Classical Grabar, literary language, vernacular language, laut, phonetics, phonem, phonemics, phonology, distinctive feature, diphtong, triphthong, diphtongoid*